

4196

281.6  
S-30

1911

CB 2001

7087

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

## ԱՏԵՆԱՊԵՏԱՑ ԴԻԻԱՆԻ

Ի ՄԱՍԻՆ ՕՐՄԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԵԱՆՑ



Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. Օսմ. Գործակցական Ընկերության

Պատր Ալի Էպրուսուուոս հասեպ Թիւ 27

361  
Ս-30

1911

281/G  
S-30

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

## ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ

### Ի ՄԱՍԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԱ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՑ ԲԱՐԵՓՈՒԵԱԼ ՅՕԴՈՒԱԾՆԵՐՈՒ

Վսեմաշուք  
Ատենապետ Էֆէնտի  
Ազգ. Երեսփ. Հնդհ. Ժողովոյ

39

Նախաձեռնութեան Դիւանս փետր. 24 թուակիր տեղեկագրով, ներկայացուցած էր Պատկ. Ժողովիդ, Երուսաղէմի վանքին ներքին կանոնագրի երմտական գործառնութեանց վերաբերեալ յօդուածներու մէջ անհրաժեշտ դատած բարեփոխութիւններն Պատկ. Ժողովիդ փետր. 10ի նիստին մէջ քուէարկուած բանաձեւին հիման վրայ և արտայայտուած կարծիքներուն հետեւողութեամբ:

Մայր Դիւանդ, Ազգ. Ժողովոյ որոշման համեմատ փետրվար 26 թուակիր և 1161 թուահամար պաշտօնագրով մը Դիւանիս վերագարձներով նոյն տեղեկագիրը, կը յանձնարարէր, փոփոխելի կանոնական տրամագրութիւնները աւելի մանրամասն և հին տրամագրութիւններուն հետ բաղդատուելու ձեւով պատրաստել և կըրկին ներկայացնել Ազգ. Ժողովոյ քրննութեան:

Նախաձեռնութեան Դիւանս, այս անգամ կատարելով իրեն յանձնուած այս աշխատութիւնը, պատիւ ունի ներկայացնելու ծրագրուած բարե-

փոխութիւնները, տարողրեալ ձեւով: Եւ որպէս զի լաւ բմբունուի, բարեփոխեալ յօդուածներու իմաստը, Դիւանս, իբրև յաւելուածական յօդուած նոյն կանոնագրին, կ'առաջարկէ նախ և առաջ հետեւեալը:

Յաւելուածական յօդուած.— Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան երմտական և մատակարարական գործին վերին հսկողութիւնը յանձնուած է Ազգ. Կեդրոնական Վարչութեան կամ անկէ կարգեալ մնայուն խնամակալութեան մը, որ իր կողմէ նշանակուած հաշուեքննիչ պաշտօնէին միջոցաւ, և մասնաւոր յօդուածներով սահմանեալ տրամագրութեանց համեմատ ի գործ կը դնէ իրեն յանձնուած պաշտօնը:

ԱՐԴԻ (1888Ի) ԿԱՆՈՆԱԳՐԻՆ  
ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ

Յօդ. 31. Տնօրէն Ժողովոյ պաշտօնն է հաւանութեամբ Ս. Պատրիարքի, Ս.Ա.թող պաշտօնատարաց կողմէ ներկայացուած և ճշաւոր և ծանրակշիւ գործերը անօրինել, նախապէս ստա-



նախ անոնց կարծիքը և դիտ-  
զութիւնն.

Ստորագրեալ պաշտօնէից ընտրու-  
թիւնները կատարել:

Վարչական հրահանգներն և անօ-  
րէնութիւնները սահմանել:

Եւ ի մի բան, անօրինել այն ամէն  
գործերն, որք իւրաքանչիւր պաշտօ-  
նատարի իրաւասութենէն վեր կը  
դատուին:

Նոյնպէս, Տնօրէն ժողովոյ պաշ-  
տաման կը պատկանի, հաւանութեամբ  
միշտ Ս. Պատրիարքի, Ս. Աթոռոյ  
վարկը պահելու համար ի հարկին  
փոխառութեան պէտքն ու պայման-  
ները սահմանել, կալուածական զնումն  
և վաճառումն ընել, Միաբանից ըն-  
դունելութիւնն որոշել, ամբաստանու-  
թիւնները քննել, հրաժարում վճուել,  
աստիճանի բարձրացման արժանաւոր-  
ութիւնն (բաց ի Եպիսկոպոսներէ)  
որոշել, և ի դէպս մահուան Միաբա-  
նից սեփական գոյից վրայ կանոնա-  
կան տրամադրութիւնն ի գործ դնել:

Յօդ. 32.— Տնօրէն ժողովը ամէն  
ամսագրութիւն պաշտօնէից հաշիւները կը  
քննէ, չորս ամիսն անգամ մը Ս. Աթո-  
ռոյ ելեւմտից վիճակն ստուգելով  
հարկաւոր անօրէնութիւնները կ'ընէ,  
ամէն տարեգրութիւն անցելոյն հաշիւները  
կը փակէ և յաջորդին երկուսուցոյր  
կանխաւ յարգարեւոյ՛ բացատրական  
Տեղեկագրութեամբ կը ներկայէ Միա-  
բանական Ընդհանուր ժողովոյ:

Յօդ. 37.— Ընդհանուր ժողովն  
կը գումարի,

Ա. Կանոնաւորապէս ամէն տա-  
րեգրութիւն (Մայիս) Տնօրէն ժողովոյ հա-  
մարատուութիւնը առնելու և առ  
Ազգային երեսփոխանական ժողովն  
իր համարը տալու, և՛

Բ. Պատահապէս երբ Ս. Պատրի-  
արքը, կամ Տնօրէն ժողովը մասնաւոր

ինդրոյ մը համար հարկ տեսնեն և  
կամ Ընդհանուր ժողովոյ Ս. Երու-  
սաղէմի մէջ գտնուող անդամոց մէկ  
երրորդ մասը բացորոշ խնդրագրով  
հայցեն անոր գումարումը:

Յօդ. 44.— Ամէն տարեգրութիւ  
Միաբանական Ընդհանուր ժողովը  
Տնօրէն ժողովոյ համարատուութեան  
Տեղեկագիրն և Երկուսուցոյն ընդու-  
ներով ստուգելէ և վաւերացնելէ յե-  
տոյ իր կողմէն համարատուութեան  
Տեղեկագիր կ'ուղղէ առ Ազգային  
Երեսփոխանական ժողովն, մի առ մի  
նշանակելով ի նմին 33 ըդ. յօդուածին  
տրամադրութեան համաձայն ասորոյն  
մէջ կատարուած Վարչական, Տնտե-  
սական, Երկտական, Բարեկարգական  
անօրէնութիւնքն, ինչպէս նաև վեր-  
ջացեալ տարւոյ հաշուեկշիւն:

Յօդ. 47.— Երկուսուց կը  
ընտրուի Տնօրէն ժողովէն և համա-  
րատու է նմա և պաշտօնն է Ս. Ա-  
թոռոյ երկուսուց կանոնաւոր անտեսու-  
թեան և համարակալութեան վերա-  
տեսչութիւնը:

Յօդ. 50.— Ս. Աթոռոյ ամէն տե-  
սակ ելեւմտորը սահմանեալ երկուս-  
ուցոյն համաձայն կը դանձուին կամ  
կը վճարուին Ելեւմտից Տեսչին ձե-  
ռօք. իսկ Երկուսուցոյ՛ գուրս սրտա-  
սովոր հասութից գանձումն և ծա-  
խուց վճարումն կը լինի Տնօրէն ժո-  
ղովոյ մասնաւոր և պատճառաբանեալ  
որոշմամբ և Ս. Պատրիարքի պաշտօ-  
նագրով:

Յօդ. 51.— Ս. Աթոռոյ փոխառա-  
կան գործողութիւնք Ելեւմտից Տես-  
չին ձեռօք կը կատարուին՝ Տնօրէն  
ժողովոյ որոշումն և Ս. Պատրիարքի  
պաշտօնագիրն ստանալէ յետոյ:

Յօդ. 67.— Ամեն ծախք ելնելէն  
ետքը՝ տարեկան 3 առ 100 արդիւնք  
չը բերող կալուածներն և հեռաւոր

րութեան կամ այլ պարագայից պատ-  
ճառաւ կանոնաւորապէս անտե-  
սեն զժուարին եղողները՝ (՚ի բաց  
առեալ անոնք որ չը ծախուելու պայ-  
մանաւ կտակեալ են Ս. Աթոռոյ),  
ծախելու, անոնց տեղ արդիւնաւոր  
կալուած գնելու, նոր գետին ծախու  
առնելու և կամ նոր շէնք շինելու  
անօրէնութիւնք Տնօրէն ժողովոյ իրա-  
ւասութեան ներքեւ կը գործադրուին  
Կալուածական Պաշտօնէից ձեռօք և  
կամ յարմար դատուած այլ եղա-  
նակաւ:

Յօդ. 85.— Սոյն կանոնագիրը վե-  
րաքննելի է Ազգային Երեսփոխանա-  
կան ժողովով վաւերացման օրէն հաշ-  
ուելով չորս տարի ետքը, վերաքնն-  
ութիւնը Միաբանական Ընդհանուր  
ժողովով կը կատարուի և ազգային  
Երեսփոխանական ժողովոյ կը մատուց-  
ուի ՚ի վաւերացումն:

ԲԱՐԵՓՈՒԵԱԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԻՔ  
Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԻՅԲԱՆԱԿԱՆ  
ԿԱՆՈՆԱԳՐԻ

Յօդ. 31.— Տնօրէն ժողովոյ պաշ-  
տօնն է հաւանութեամբ Ս. Պատ-  
րիարքի,

Ա. Ս. Աթոռոյ պաշտօնատարաց  
կողմէ ներկայացուած ճշտոր ծան-  
րակիւս գործերը անօրինել, նախա-  
պէս ստանալով անոնց կարծիքը և  
դիտողութիւնը:

Բ. Ստորակարգեալ պաշտօնէից  
ընտրութիւնները կատարել:

Գ. Վարչական հրահանգները և  
անօրինութիւնները սահմանել:

Դ. Միաբանից ընդունելութիւնն  
որոշել, ամբաստանութիւնները քնն-  
նել, հրաժարումը վճուել, աստիճանի  
բարձրացման արժանաւորութիւնը  
(բաց ի Եպիսկոպոսներէ) որոշել, և  
չի դէպս մահուան միաբանից սեպհա-

կան գոյից վրայ կանոնական տրա-  
մադրութիւնն ՚ի գործ դնել:

Ե. Ս. Աթոռոյ վարկը պահելու  
հաւար ՚ի հարկին փոխառութեան,  
իկնպէս նաեւ կաշուածական գնումի  
եւ վաճառումի պէսքն ու պայման-  
ները սահմանել եւ Ս. Պատրիարքին  
ու Միաբանական Ընդհ. ժողովոյ  
հաւանութիւնը եւ Ազգ. Կեդր. Վար-  
չութեան արտօնութիւնը ստանալէն  
եւսքը գործանել ՚ի գործ դնել:

Յօդ. 32.— Տնօրէն ժողովը ամեն  
ամսագրութիւն պաշտօնէից հաշիւները  
ստանալով, կը յանձնէ զանոնք կեդ-  
րոնի հաշուեքննիչին քննութեան, ո-  
րուն դիտողութիւնները նկատողու-  
թեան առնելու պարտաւոր է: Չորս  
ամիսն անգամ մը Ս. Աթոռոյ ելեւ-  
մտից վիճակը ստուգելով, աջակ-  
ցութեամբ քննիչին, հարկ եղած  
անօրինութիւնները կ'ընէ: Ամեն տա-  
րեգրութիւն անցելոյն հաշիւները կը  
փակէ և յաջորդ տարւոյն պիւտճէն  
պատրաստելով բացատրական տեղե-  
կագրութեամբ կը ներկայացնէ միա-  
բանական Ընդհանուր ժողովոյ:

Յօդ. 37.— Ընդհանուր ժողովն  
կը գումարուի՝

Ա. Կանոնաւորապէս ամէն տարե-  
գրութիւն (Մայիս) Տնօրէն ժողովոյ հա-  
մարատուութիւնն առնելու, վերջացող  
ստոր մակրաւանեալ մասակարա-  
րական հաշիւները ֆեկեթու եւ յայտ-  
դիլ երկուսուցոյր պատրաստելու եւ թե-  
սոյն հաշիւները թե՛ յիշեալ երկուս-  
ուցոյցն Ազգային Երեսփ. ժողովոյ վա-  
ւերացման ենթակելու, եւ՛

Բ. Պատահապէս երբ Ս. Պատ-  
րիարքը, կամ Տնօրէն ժողովը մաս-  
նաւոր խնդրոյ մը համար հարկ տես-  
նեն և կամ Ընդհանուր ժողովոյ Ս.  
Երուսաղէմի մէջ գտնուող անդամոց  
մէկ երկրորդ մասը բացորոշ խնդրա-

գրով հայցեն անոր գումարումը :  
Յօդ. 41. — Ամեն տարեգրութի  
Միաբանական Ընդհ. Ժողովը Տնօրէն  
Ժողովոյ համարատուութեան տեղե-  
կագիրը և ելեւմտացոյցն ընդունե-  
լով՝ ֆնկելէ յետոյ, իր կողմէն հա-  
մարատուութեան տեղեկագիր կ'ուղ-  
ղէ առ Ազգ. Երեսփ. Ժողովը, մի  
առ մի նշանակելով 'ի նմին 32րդ  
յօդուածին տրամադրութեան հա-  
մաձայն տարւոյն մէջ կատարուած  
Վարչական, Տնտեսական, Ելմտա-  
կան, Բարեկարգական տնօրինութիւ-  
նը, ինչպէս նաեւ վերջացեալ տար-  
ւոյ մանրամասնեալ հաշուեցոյցը եւ  
ուչորոյ սարոյ ելմտացոյցը (պիտանեմ)  
'ի հաստատութիւն : Պիտանեմ պարսա-  
ւորիչ է ներկայացնել Ազգ. Ժողովին,  
սարեգործիքն առ առաւելն երկու ա-  
միս առաջ եւ հաստատելէ ետքը մի-  
այն գործարարութեան դեմ :

Յօդ. 47. — Ելմտոյ տեսուչը կ'ընտ-  
րուի Տնօրէն Ժողովին և համարատու է  
նմա և պաշտօնն է Ս. Աթոռոյ ելմտոյ  
կանոնաւոր տնտեսութիւնը, կեդրոնի  
հաշուեցոյցին հակադրին ներքեւ :

Յօդ. 50. — Ս. Աթոռոյ ամեն տե-  
սակ ելեւմտար՝ ըստ 41րդ յօդուածի  
սրամարտութեան վարեացեալ ու  
հաստատեալ Ելեւմտացոյցին համաձայն  
կը գանձուին կամ կը վճարուին ելեւ-  
մտոյ տեսչին ձեռք Ազգ. Կեդր. Վար-  
չութեան կողմանէ կարգեալ մնայուն  
հաշուեցոյցին մը հակադրին ներ-  
քեւ. որ համարատու է նոյն Վարչու-  
թեան եւ պարսարո՛ է՝ Կ. Պոլսոյ մեջ  
կազմուելիք «Երուսաղէմի խնամակա-  
րութեան» հրահանգաց համեմատ  
չարժի : Ելմտացոյցէ դուրս արտա-  
սովոր հատուցից գանձումը և ծա-  
խուց վճարումը կը կատարուի Տնօրէն  
Ժողովոյ մասնաւոր և պատճառաբան-  
ձալ որոշմամբ, յիշեալ խնամակարու-

թեան հաշուարարութեան եւ Ս. Պարսի-  
արիի հրահանգաւ :

Յօդ. 51. — Ս. Աթոռոյ փոխա-  
ւական գործողութիւնը Ելեւմտոյ  
Տեսչին ձեռք եւ Վարչ. Հաշուեցոյց-  
նիցին հակադրին ներքեւ կը կատար-  
ուին. Տնօրէն Ժողովոյ որոշումը, Ս.  
Պարսիարիին եւ Ընդ. Ժողովոյ հաշա-  
նարարը, ինչպէս նաեւ Ազգ. Կեդր.  
Վարչութեան արտօնութիւնն ստանալէ  
յետոյ :

Յօդ. 67. — Ամեն ծախք ելեւմտ-  
եալը՝ տարեկան զէթ 3 առ 100  
արդիւնք չբերող կալուածներն, և  
հեռաւորութեան կամ այլ պարագա-  
յից պատճառաւ կանոնաւորապէս  
անտեսել զժուարին եղողները ('ի բաց  
առեալ անոնք որ չծախուելու պայ-  
մանաւ կտակեալ են Ս. Աթոռոյ),  
ծախելու, անոնց տեղ արդիւնաւոր  
կալուած գնելու, նոր գետին ծա-  
խու առնելու, և կամ նոր շէնք շի-  
նելու տնօրինութիւնը Տնօրէն Ժողո-  
վոյ իրաւաստութեան և հաշուեցոյցին  
հակադրոյն ներքեւ կը գործադրուին  
կալուածական պաշտօնէից ձեռք և  
կամ յարմար դատուած այլ եղանա-  
կաւ. պայմանաւ սակայն որ 31րդ  
յօդուածին վերջին հաստատութիւն  
սրամարտութիւնները ի գործ դրուած ըլ-  
լան կանխաւ :

Յօդ. 85. — Երուսաղէմի միաբա-  
նութեան ներքին կանոնագիրը կը  
պատրաստուի և կամ արդէն ի գոր-  
ծադրութեան եղող կանոնագիրը փո-  
փոխութեան կ'ենթարկուի, ըստ տրա-  
մադրութեան 48րդ յօդուածի Ազգ.  
Սահմանադրութեանի ձեռն Կեդրոնա-  
կան Վարչութեան, որ միաբանութեան  
կարծիքը ստանալէ յետոյ կը ներկա-  
յացնէ Ազգ. Ժողովոյ ի վաւերացումն :

Անդամք Նախաձեռնութեան Դիւանի  
Ա. Աղապետ Ա. Փափագեան  
Մ. Երիցեան

# Տ Ե Ղ Ե Կ Ա Պ Ի Բ

## Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ Ա Յ Դ Ի Ի Ա Ն Ի

### Ի ՄԱՍԻՆ ՕՐՄԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ԱՄԲԱՍԱՆՈՒԹԵԱՆՑ

Ամենապատիւ

Տ. Յովհաննէս Արքեպիսկոպոս Արարունի

Պարսիարք Հայոց Թուրքիոյ եւ Նախագահ Ազգ. Ժողովոյ

Ամենապատիւ Սրբազան Հայր :

Ազգ. Երեսփ. Ժողովը 8 Յուլիս 1911ի  
Ը. Նիստին մէջ, Ատենապետաց Դի-  
ւանի նախաքննութեան ենթարկած էր  
Ազգ. Երեսփոխան Ա. Վառճապետ Էֆ. Ի  
ամբաստանագիրը, ի մասին նախկին  
Պարսիարք Օրմանեան Ս. Ի միեւնոյն  
ատեն պաշտօն տալով իրեն վերաքննե-  
լու օրինական կէտերը Խորհրդարանա-  
կան Յանձնաժողովոյ տեղեկագրին, որ  
մատուցուած էր Ազգ. Ժողովին 22 Հոկ-  
տեմբեր 1910ի նիստին :

Ատենապետաց Դիւանը առաջին ան-  
գամ հրաւիրուեցաւ ի նիստ 22 Սեպտեմ-  
բեր 1911ին, Ազգ. Ժողովոյ դեր Ատենա-  
պետ Հրանտ Առատուր Էֆ. Ի կողմէ, որ  
հաղիւ երկու նիստ Ատենապետելէ յետոյ,  
Ազգ. Ժողովոյ Ա. Ատենապետ Մանուկ  
Էֆ. Ազարեան վերադարձաւ Երուսաղէ և  
վարեց Դիւանին Ատենապետութիւնը մին-  
չեւ վերջ :

Դիւանը իր կազմութենէն յետոյ, տե-  
ղեկանալով Ազգ. Ժողովոյ կողմէ իրեն  
յանձնուած երկու խնդիրներուն, սկզբուն-  
քի կարեւոր հարց մը նկատուելիան ա-  
ռաւ : Անդամներէ ոմանց կողմէ դիտել  
տրուեցաւ ի Ս. Ազգ. Ժողովոյ ստանձնած այս  
քննութիւնը կը հակասէ Ազգ. Սահմանա-  
դրութեան 5 և 6րդ յօդուածներու տրամա-  
դրութեանց, որուն համեմատ ժողովը իրա-  
ւունք ունի ամբաստանութեան ներքեւ  
առնելու և դատելու Պարսիարք մը որ

պաշտօնի վրայ է և առ այդ գործադրուե-  
լիք պայմաններն ալ որոշուած են նոյն  
յօդուածներով, իսկ Պարսիարք մը պաշ-  
տօնէ դադարելէն յետոյ վիճակաւոր եպիս-  
կոպոսոս կարգը կ'անցնի և Խառն Ժողո-  
վոյ անկ է ըստ կանոնի տնօրինել պէտք  
եղածը : (Տես Սահմ. յօդ. 7) :

Այս վերջին տողերէն կը հասկցուի որ  
պաշտօնէ դադարած Պարսիարք մը ամ-  
բաստանութեան քննութիւնը, Խառն Ժո-  
ղովոյ յատուկ գործ մ'էր և Օրմանեան  
Ս. Ի դէմ ամբաստանութիւն ներկայաց-  
ուած պահուն, ինքն պաշտօնէ դադարած  
էր արդէն և Պարսիարքական ամբողջին  
վրայ կը գտնուէր ուրիշ Պարսիարք մը,  
որով Պարսիարքի ամբաստանութեան քն-  
նութեան ու է գործ չկար մէջտեղ : Եւ  
արդէն Պարսիարքի ամբաստանութեան  
պարագային, Ատենապետաց Դիւանի պաշ-  
տօնը զժող ներքին կանոնագրի 84րդ  
յօդուածէն ալ կարելի է ճշտել թէ, Սահ-  
մանադրութեան այդ արամադրութիւննե-  
րը կը վերաբերին պաշտօնի վրայ գտնուող  
Պարսիարքներու :

Ատենապետաց Դիւանը անձեռնառ  
պիտի համարէր զինքն այս քննութեան,  
մասնաւոր ուր այս գործին նախաքննու-  
թիւնն ալ իրեն յանձնուած չէր, ըստ կանոնի  
Խորհրդարանական Յանձնաժողովոյ դրուելէ  
առաջ, սակայն նկատելով որ Ազգ. Ժո-  
ղովը իրեն օրէնագիր մարմին՝ օրէնքին ո  
և է մէկ մութ կէտին մեկնութեան միակ  
ձեռնառ մարմինն է, դարձեալ նկատու-

լով որ Ազգ. Ժողովը այդ ամբաստանութիւնը իւրացուցած և Սորհրդարանական քննիչ մարմին մը կազմած էր որ երկար քննութիւններէ յետոյ աւարտած էր իր աշխատութիւնը և տեղեկագիր մը բերած, վերջապէս նկատելով որ քննութեան արդիւնքին սպասող ամբաստանեալ մը կար որ հոգեւոր պաշտօն կատարելէ ալ զրկուած էր 3 տարիէ ի վեր, և Ազգ. Ժողովը ընդդէմ կամ ի նպաստ վճիռ մը արձակելու պարտաւորութեան ներքեւ կը դանտ, էր, Ատենապետաց Դիւանս, քուէից մեծամասնութեամբ որոշեց ձեռնարկել իրեն յանձնուած պաշտօնին:

Նախ և առաջ որոշուեցաւ քննել Ա. Վառժեան էֆ. ի ամբաստանութիւնը, ուստի կարգացուեցաւ Ազգ. Ժողովոյ ուղղած և 5 կէտերէ բաղկացեալ ծանօթ ամբաստանագիրը, որ հրատարակուած է Ժողովոյ Ատենագրութեանց մէջ և պէտք տեսնուեցաւ այս մասին լսելու ճառ Առաջնական էֆ ի լուսաբանութիւնները և բերանացի տեղեկութիւնները:

Վառժեան էֆ. պատասխանելով Դիւանիս հրաւերին, ներկայ գտնուեցաւ մեր 19 Հոկտեմբեր 1911 թ. Նիստին և իրեն նետ բերաւ ուսուերէն ընդարձակ հասարակութեան վերաբերեալ տեղեկութիւններ կան, յիշմիածին գումարուած բնութանուր ժողովին իբր թէ կուսակցական հանգամանքին, կուսակցականները խելքի բերելու և Սինոզի իրաւասութեան մասին, որոնք ամբաստանութեան գլխաւոր հիմերը կը կազմէին: Վառժեան էֆ. յատենի Դիւանիս գրքին կարեւոր մասերը թարգմանելէ զատ, ի պատասխանի Ատենապետ էֆէնտի հարցման յայտարարեց թէ ինք բացի այս գրքէն, ո և է փաստ չունի իր ամբաստանութիւնը հաստատող, որովհետեւ նախկին Պատրիարքին դէմ անձնական հակառակորդ մը չէ և առ այդ փաստ ճարելու չէ նետամտած, բայց այս հաստորին Եջ պատահարը անսնելով դեսար-

նին այդ նամակը, որուն մէջ կան զանազան յայտնութիւններ, նախկին Պատրիարքին զիրքին, պաշտօնին և ազգին կողմէ իրեն ցոյց արուած վստահութեան անհամապատասխան, հարկադրուած է պահանջել այս քննութիւնը:

Դիւանս նոյն ուսուերէն հատորը և թարգմանութիւնը առնելէ յետոյ, առանձինն խորհրդակցելով պէտք տեսաւ Վառժեան էֆ. ի ամբաստանութեան բոլոր կէտերը հաղորդել Օրմանեան Ս. ի և որոշեալ որ մը հրաւիրել զինքը ներկայանալու Դիւանիս և իր բացատրութիւնները տալու:

Ատենապետաց Դիւանի 17 Հոկտեմբեր 2. Նիստին Օրմանեան Ս. անձամբ ներկայացաւ և ամբաստանութեան հիմ կազմող կէտերուն մի առ մի պատասխանեց բերանացի և իր զբաւոր պատասխաններն ալ յանձնեց: Իր բերանացի խօսքերն ուրոնք Դիւանիս մանրամասն Ատենագրութեան մէջ նշանակուած են, ի հարկին կարգացուելու համար Ազգ. Ժողովոյ մէջ, կարելի է ամփոփել հետեւեալ կերպով: «Ռուսիոյ դեմոքրատիան թարգմաններէն երկրորդական հանգամանք ունեցող մէկը եկած էր ինձ տեղեկանալու համար որ 1906ին յիշմիածին գումարուած եկեղեցական ժողովը, ո և է առնչութիւն ունէր թրքահայոց հետ, պատասխանեցինք թէ այդ ժողովը տեղական հանգամանքով կը գումարուէր՝ կրթական և տնտեսական խնդիրներով զբաղելու համար, հետեւաբար թրքահայոց հետ ո և է կապ չունէր, նոյնիսկ տեղեկութիւն ալ չկայ Պատրիարքարան իր գումարման մասին և ինչ որ կը կարգացուի Կովկասի թերթերուն մէջ, այն միայն յայտնի է» Օրմանեան Ս. բացէ ի բաց մերժեց թէ ինք Կովկասի իրաւասութիւնը Սինոզին ենթարկելու ո և է ձգտում ունեցած լլայ, լողճակաւոր յայտնեց թէ Կովկասի իրաւասութիւնը ընդարձակելու կողմը դանուած է միշտ, իսկ կուսակցականները խելքի բերելու մասին ալ ո և է խօսք չէ եղած, մանաւանդ թէ ըստ այդ բառին թարգմանութիւնն ալ ճիշտ չէ, սրովհետեւ ուսուերէն բնագրին մէջ գրուած բառը կը թարգմանուի զգացնիք ոչ թէ խելքի բերէք, և

այս երկուքին մէջ իմաստի զանազանութիւնը ակնբերել է:

Օրմանեան Ս. աւելցուց նաև որ դեսպանատան թարգմաններէն Պ. Նիկոլայէվի հետ իր այս տեսակցութիւնը ունեցած պահուն, էջմիածին գումարուած ժողովը փակուած էր արդէն, իսկ նոյն ուսուերէն հատորին մէջ գրուած ուրիշ հատուած մը թէ ինք զրբը զրկած է էջմիածնայ եպիսկոպոսներուն և անոնց մէջ ակնարկութիւններ կան կուսակցականաց մասին, ճիշտ չէր ամենեւին, ու Պոլսոյ 12 եպիսկոպոսներէն Սրբիմեան Ս. Կաթողիկոսի ուղղուած գիր մ'էր յիշուածը, որուած անցքերուն վերաբերեալ:

Օրմանեան Ս. ի վերոնշանակեալ յայտարարութիւններէն զատ, յիշուած եպիսկոպոսաց գիրը հարկ էր գտնել այն յուսով որ թերեւս լուսաբանութիւն մը տար ինդրոյն վրայ: Դիւանս այդ գիրը ինչպէս և զայն ներփակող Օրմանեան Ս. ի Պատրիարքական պաշտօնագիրը կարգալէ յետոյ, վերահասու եղաւ թէ ո և է կերպով առնչութիւն չունէր քննելի ինդրոյն հետ և տարբեր պարագայի մէջ ուղղուած էր այն:

Թեր ու դէմ յայտարարութիւնները լսուելէ յետոյ, դիւանս գրաւորապէս հրաւիրեց Վառժեան էֆ. ն սր եթէ նոր ապացոյց կամ ուրիշ փաստ ունի իւր որոշ ամբաստանութեանց իբր հիմ ծուայող, հաղորդէ: Ասոր պատասխանած էր թէ ոչինչ չունի նոր, բայց երբ տեղեկանայ նախկին Պատրիարքին սուած բացատրութեանց ինքն ալ կը պատասխանէ պէտք եղածը, ուստի վերապահելով իր իրաւունքը խօսելու յատենի Ազգ. Ժողովոյ, նոր լուսաբանութիւն մը չէր հաղորդուած նոյն ինդրոյն վրայ:

Դիւանս՝ ներկայացեալ ուսուերէն հատորին հայերէն թարգմանութեան հարազատութիւնն ալ քննեց մասնաւոր կերպով և իր աշխատութիւնը լրացուցած համարելով առաւ հետեւեալ որոշումը:

1.— Նկատելով որ՝ հրատարակուած ուսուերէն հատորէն զատ չկար ո և է զբաւոր փաստ հաստատող այն ամբաստանութիւններն որոնք կային Վառժեան էֆ. ի գրութեան մէջ:

2.— Նկատելով որ այդ ամբաստանութիւններն հաստատող վկայութիւնն ալ չկար ո և է մէկէն, Պ. Նիկոլայէվի և Օրմանեան Ս. ի միջեւ ակնարկուած տեսակցութիւնը պատմուած կերպով տեղի ունեցած ըլլալուն համար:

3.— Նկատելով որ Օրմանեան Ս. յայտարարած է որ այդ խօսակցութիւնը խեղաթիւրեալ և այլափոխեալ ներկայացուած է և Դիւանս չունէր ո և է նստաւորութիւն ստուգելու նոյն թարգմանէն այս խօսակցութեան իսկութիւնը:

4.— Նկատելով որ վերոյիշեալ ուսուերէն հատորը, ոչ թէ դատական վճիռով վաւերականութիւն ստացած հրատարակութիւն մ'էր, այլ պարզ հարցաքննութեան գիր մը որ դատավարութեան հիմ չեղած չէր կրնար ունենալ պա՛անջուած վաւերական հանգամանքը:

Հետեւաբար Վառժեան էֆ. ի ամբաստանութիւնը անհետեւանք թողուց, Տօքթ. Ծէլալ էֆ. ի ձեռնպահութեան փոխարէն՝ միւս անդամներու քուէից միաձայնութեամբ, ի բաց առեալ Պալաքեան Տ. Գրիգորիս Վ. է և Արիստակէս Գասպարեան էֆ. է, որոնք ներկայ կը գտնուէին միայն ի հարկին լուսաբանութիւններ տալու համար, իրբեւ ամբաստանող Օրմանեան Սրբազանի:

Դիւանս այս նախաքննական աշխատութիւնը եզրակացնելէ անմիջապէս վերջը, ձեռք առաւ Սորհրդարանական յանձնաժողովոյ տեղեկագիրը և գլուխ առ գլուխ կարգալէ յետոյ իւրաքանչիւր գլուխ մասին Ա. Գասպարեան էֆ. ի դիտողագիրն ալ ունեցաւ ի նկատի և անուասիկ կու գայ ներկայացնել Պաակ. Ժողովոյ իր քննութեան արդիւնքը:

Մանրամասնութեան մէջ մանելէ առաջ կու գանք տեղեկացնել որ մեր պաշտօնակիցներէն Գրիգորիս Վ. Պալաքեան և Գասպարեան էֆ. զիտել առին թէ, Սորհրդարանական յանձնաժողովը ի նկատի չէ առած իրենց բերանացի և զբաւոր ամբաստանութեանց ամբողջութիւնը, առ որ Ատենապետաց Դիւանս աւարկեց թէ պաշտօն չունէր ո և է նոր քննութիւն կուսակցութեան ինդրոյն էութեան և մանրամասնութեան մասին, այլ պիտի բաւ կանա-

նար կարծիք յայսնելով թէ դործը օրինա-  
ւոր կերպով քննուած է թէ ոչ, ուստի  
այս քննութիւնը կատարեց միայն առանց  
պէտք տեսնելու ամբաստանազրկները աչքէ  
անցնելու, արուած պատասխանները որո-  
շելու և նոր դատական քննութեան մը  
ուղղութիւն տալու խնդրոյն, որ հաւա-  
նականաբար շատ երկար պիտի տևէր:

Անցողակի միայն այս կէտը դիտել սա-  
լով կուզանք բուն Սարգստեանական  
յանձնաժողովոյ անդեկազրին մանրամաս-  
նութեանց:

Գ. Գլուխով խօսուած է Օրմանեան  
Ս. փ վերաբերեալ հակասամանադրական  
արարքներուն վրայ: Քննիչ Յանձնաժողովը  
այս մասին իր քննութեան աւարկայ եղած  
խնդիրները պաշտօնագիրներէն ստեղծած  
և ամբաստանողներու գրաւոր ամբաստա-  
նութիւններն ու բերանացի անդեկութիւն-  
ներն ստացած ըլլալով իրաքանչիւր կէտի  
մասին իր եզրակացութիւնը յառաջ բե-  
րած է: Դիւանս այս գլուխին մէջ կա-  
տարուած քննութիւնը օրինաւոր կը գտնէ  
և համամիտ է որ իբրև հակասամանա-  
դրական արարք մասնանիջ եղած խնդր-  
ները, ծնունդ էին աւելի օրուան գծնդակ  
քաղաքականութեան և բանասիրական  
գրութեան, որուն ներքեւ ազգին գոյու-  
թիւնը և Պատրիարքարանի դիրքը պահ-  
պանելու համար ձեւի մէջ գիշումներ և  
ղած են:

Դ. Գլուխը կը վերաբերի հաշուական  
խնդիրներու, որոց մասին Յանձնաժողովը  
քննութիւն չէ կատարած, իբրև իր իրա-  
ւասութեան վեր խնդիր մը:

Ե. Գլուխը կը վերաբերի Օրմանեան  
Ս. փ Եղզէթ և Թաճին բաշաներու հետ ու-  
նեցած յարաբերութեանց, իրեն և իրեննե-  
րուն պատուանշաններ առնելուն, Օրման-  
եան Ս. փ գիմուներուն վանուելուն ևն.:  
Քննիչ Յանձնաժողովը կ'եզրակացնէ թէ  
«այս բոլորը համարատուութեան մաս  
կազմելուն ի հարկէ առանձին քննութեան  
պիտի ենթարկուին»: Ուրեմն Յանձնաժո-  
ղովոյ անդեկազրին կը հասկցուի թէ սա-  
կաւին կան քանի մը կէտեր որոնք պէտք  
է քննուին համարատուութեամբ, սակայն  
Դիւանս դիտել կուտայ թէ, Սահմանա-  
դրութեան ու է մէկ յօդուածով պարի-

արքները անհատապէս համարատուութիւն  
ներկայացնելու պարտաւոր չեն Ազգ. Ժո-  
ղովին, և Օրմանեան Ս. է առանձին հա-  
մարատուութիւն պահանջելու իրաւունք  
ալ չկայ, ուստի հարկ էր որ այս խնդիր-  
ները իբրև իր անձին վերաբերեալ դործեր  
քննուէին նոյն Յանձնաժողովոյ կողմէ,  
և ուղիղ կամ սխալ եզրակացութեան մը  
յանգէին: Այս մասին հարկ եղած բացա-  
րութիւնը, պէտք է ստանալ Քննիչ  
Յանձնաժողովոյ անդեկազրէն:

Զ. Գլուխը կը վերաբերի հակակարծիք  
ժողովականները սաստելուն: Այս մասին  
Յանձնաժողովոյ եզրակացութիւնը օրինա-  
ւոր կը գտնէ Դիւանս ինչպէս նաև է,  
գլուխին այսինքն Սասունի կատարածի  
անդեկազրին անյայտացման խնդրոյն, Լ.  
Աղթամարոյ ունեւորման առթիւ բե-  
լու պարագային Թ. Միջագիւղի և Պէ-  
չիքթաշի գերեզմանատուներու նկատ-  
մամբ պարզած անտութիւններուն և  
եզրակացութիւններուն, որոնց մէջ օրի-  
նաւոր և պատշաճ քննութիւնը կատար-  
ուած և դատապարտութեան պարագայ  
երևան չգալէն գտտ, ընդհակառակը հաս-  
տատուած է թէ Պատրիարքարանը այդ  
արհաւիրալից շրջաններու մէջ կրցած է ընել  
հնարաւորը ազգին իրաւունքները պաշտ-  
պանելու համար:

Ժ. Գլուխը կը վերաբերի Արմենակ  
Գարակէօզեանի սպանութեան խնդրոյն:  
Այս ամբաստանութեան մէջ Օրմանեան  
Ս. փ վերաբերեալ մասը այնչափ է միայն որ  
հանդուցելոյն պարագայներուն կողմէ և  
զած գիմումին վրայ չէ բողոքած ձեռնհաս  
իշխանութեան Գարակէօզեանի մարմնացի  
վրայ տեսնուած խոչտանդման նշաններու  
համար: Սակայն երկու վկայներէ միջին  
բերանացի յայտարարութիւնը այն է որ  
«առ ա՛նի խնդիրը պարզել չեն ուղած»:  
Այս վկայութեան կը հասկցուի թէ Գա-  
րակէօզեանի պարագաները, օրուան զառն  
վիճակը և իրենց սպանացող վտանգը  
տեսնելով, չեն ուղած յառաջ երթալ գոր-  
ծին մէջ, որ չէր կրնար տալ ու է արդիւնք  
մը, ուստի Դիւանս օրինաւոր կը գտնէ  
քննիչ Յանձնաժողովին եզրակացութիւնը  
նաև այս մասին:

Տեղեկազրին ԺԱ. գլուխը կը կազմէ

Լահէյ քաջուած հեռագիրը, որու մասին  
Յանձնաժողովը առանձին քննութիւն կա-  
տարելով և ստանալով Օրմանեան Ս. փ տե-  
ղեկութիւններն եզրակացուցած էր թէ  
նրբելի պէտք է համարիլ դործուածը: Դի-  
ւանս կատարեալ գիտակցութեամբ իր կար-  
ծիքը տալու համար այս մասին, հարկ տե-  
սաւ ամբողջացնել անդի ունեցած քննու-  
թիւնը և դիմեց իւր Ստեփանակուն միջո-  
ցաւ Գարբիէլ էֆ. Նորատուէկեանի խնդ-  
րելով վկայութիւնը և ստացաւ հետեւեալ  
նամակը.

Վսեմաշուք Ստեփանակուն էֆէնտի  
Ազգային Երեսփոխանական Ժողովոյ,  
Ստեփանակուն Դիւանը՝ Ձեր վսեմու-  
թեան միջոցաւ փափաք յայնմ է լսել  
իմ վկայութիւնս, նախկին Պատրիարք  
Օրմանեան Սրբազանի դէմ յարուցուած  
11րդ խնդրոյն, այն է՝ 1899 Մայիս ամ-  
սոյ մէջ Լահէ քաջուած հեռագրի մը նկատ-  
մամբ:

Թէև ամողբած էի այդ մասին ունե-  
ցած անդեկութիւնս հաղորդել յատենի  
անդ Ազգային Ժողովոյ, սակայն նկատե-  
լով որ պատուարժան Դիւանը կը խնդրէ  
կանխել կը փութամ ամիսփեղ հետեւեալ  
կերպով դիտեցած այդ մասին, յիշողու-  
թեանս ներած սահմանին մէջ:

Արևեստանոց—Գարակէօզեան Խնամա-  
կալութեան մէկ նիստին վերջերս էր ո-  
րուն ներկայ էին այդ խնամակալութեան  
անդամներն Պատրիկ Կիւրղէնկեան,  
Արարիկ Ստեփան և Սեպուհ Տէմիրճի-  
պաշեան էֆէնտիները, խօսք դարձաւ  
օրուան ազգային զմեղակ կացութեան  
վրայ, և Օրմանեան Սրբազան մտեր-  
մաբար պարզեց վիճակին ծանրութիւնը և  
յայտնեց միանգամայն թէ Արքունիքէն  
կրկին ստիպանք պահանջումներ եղած  
են Լահէի խաղաղասիրական Վեհաժողովոյ  
առթիւ, յանուն Թուրքիոյ Հայոց՝ պատ-  
ուիրակութիւն մը առաքուած ըլլալուն  
վերաբերմամբ:

Ի նկատ առնելով որ այդ պահանջումն  
աղայական է, քանի որ ակնբեր յայտնի  
էր որ ըստ դիւանագիտական կանոնաց  
Վեհաժողովն տէրութեանց մէջ նախապէս  
արդեալ ծրագրէն զուրս այլ խնդրով զլա-

ղելու իրաւունք չունէր, ներկայքս բռնիք  
թէ այդ պատուիրակութիւնը ու է գործ-  
նական արդիւնք չպիտի ունենայ, և թէ՛  
մեր կարծեօք՝ Արքունեաց կողմէ անդի  
ունեցած այդ պահանջման ձեւակերպական  
զոհացումն տալով ազգը բնաւ վնաս մը  
չը կրէր: Այս առթիւ Սեպուհ էֆ. Տէմիր-  
ճիպաշեան իրաւամբ դիտել տուաւ թէ  
ընդհակառակը հեռագիրը օգնու խոկ  
կ'ունենայ, հալածանաց մասամբ առջեւ  
կ'առնու, փոխանակ արժարձուելուն ան-  
տեղի կատկածանաց հետեւանք:

Ձեմ յիշեր այն ատեն հեռագրին տե-  
սած ըլլալս, սակայն այդ պարագայն կա-  
րեւորութիւն չունի ըստ իս:

Գալով 1907ի Լահէի երկրորդ Վեհա-  
ժողովին, ինչպէս յայտնի է, ո՛ր և է հե-  
ռագիր արուած չէ անոր Պատրիարքարանի  
կողմէ:

Մնամ խորին յարգանք Ձեզ  
Գ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Բերա, 1/14 Դեկտ. 1911

Դիւանս այս խնդրոյ վերաբերմամբ  
հարկ կը համարի դիտել տալ թէ անդի ու-  
նեցած իրողութիւնը յանցանք մը չկազմեր,  
մանաւանդ թէ գառն վիճակի առջեւ ի  
գործ դրուած այսպիսի միջոց մը, ազգին  
սպանացող վտանգի մը դէմ ձեռք առ-  
նուած զգուշական միջոց մ'էր, պարագայ  
մը ուրկէ խուսափել կարելի ալ չէր, ըստ  
որում Եզիպտոս և Պուլկարիա Ազգ.  
Պատրիարքարանի իրաւասութեան ներքեւ  
կը գտնուէին և Չերազ էֆ. կ'ուզէր ներ-  
կայանալ Լահէի Վեհաժողովին յանուն այդ  
երկու վիճակներուն:

Տեղեկազրին վերջին գլուխը կը կազմէ  
Կ. Տէրունեանի ամուսնալուծական գործը:  
Այդ խնդրոյն մէջ Պատրիարքարանը իր  
իրաւասութեան վերջնական զուրս եղած է այնպիսի  
անդեկատուութիւններ ընելով, որոնք իրմէ  
եղած հարցումներուն պատասխաններն ալ  
չէին: Սակայն հանդուցեալ Կարապետ էֆ.  
Տէրունեանի վերաբերեալ անդեկատուու-  
թեան էութեան անգրադատնալով, կը  
տեսնենք որ նպասակ ունեցեր են արդէն  
Կ. Պօլսէն հեռացած և կառավարութեան  
ազդեցութեան բողոքովին ազատած անձի  
մը մասին անորոշ խօսքերընելով, ապահովել  
նախ Յակոբ փաշայի գոյքերուն թէրէքէի

գործողութիւնը՝ որուն մէջ աննպաստ կէ-  
տեր տեսնուած են նոյնիսկ Պատրիարքարա-  
նի առ անձնաչորհմանց տեսակէտով, երկ-  
րորդ ապահովել ազգին համար նիւթական  
օգուտ մը, ինչպէս յայտարարած է յատե-  
նի քննիչ յանձնաժողովոյ հանդուցելոյն եղ-  
բայրը Օննիկ էֆ. Տէրունեան:

Յամենայն դէպս սակայն, Դիւանս այս  
երկու պարագայները աչքի առջեւ ունե-  
նալով մեղադրելի կը գտնէ ձեռք առնուած  
միջոցը, նոյնիսկ վերահասու եղած ըլլալով  
հանդերձ որ Օրմանեան Ս. ֆ վերագրուած  
դերը աւելի նուազ է քան անոնց՝ ու-  
րոնք անպաշտօն խորհրդատուութիւննե-  
րով պատճառ և առիթ եղած են այդ  
քաղաքի գրուելուն: Այս վերջին կէտը,  
սոյն խնդրոյն մէջ մեղմացուցիչ պարագայ  
նկատելով, Դիւանս գնահատութիւնը կը  
թողու Պատկ. Ազգ. Ժողովոյ:

Ատենապետաց Դիւանս այս կերպով  
լրացնելով իրեն յանձնուած աշխատութիւ-  
նը, կուգայ աւելցնել թէ հակառակ օրի-  
նական և կանոնական ամէն բացորոշ  
արամադրութեանց թէ, ամբաստանողք  
չեն կրնար ո և է քննութեան պարագային  
մասնակցիլ Քննիչ Յանձնաժողովոյ, պա-  
րագայ մը որ Օրմանեան Ս. դիտել  
տուաւ վերջին անգամ Դիւանիս ներկա-  
յացած պահուն և նոյնը կրկնեց իր գրաւոր  
բացատրութեանց մէջ, Ատենապետաց Դի-  
ւանս ընդունեց անդամակցութիւնը Տ.  
Գրիգորիս Վ. Պալաքեանի և Արիստակէս  
էֆ. Գապարեանի, որպէսզի անոնց հա-  
զորդած լուսարանութիւններէն աւելի օգ-  
տուէ և արդարութիւնը երեւան զայ ա-  
ւելի որոշ կերպով: Իսկ ինչոք էֆ. Սի-  
մոնեան որ Վաւան էֆ. ֆ յարուցած ամ-  
բաստանութեան քննութեան մասնակցած  
է մեր եզրակացութեան համաձայն գտնուած

է, ինչպէս ցոյց կուտայ Ատենադրու-  
թիւնը, երեսփոխանութենէ դադրելէ յե-  
տոյ, չմասնակցեցաւ այլեւս Դիւանիս և  
իրեն սեղ նոյն Դիւանէն Սմբատ էֆ.  
Քեաթիպեան Ազգ. Ժողովոյ որոշմամբ  
հրաւիրուեցաւ ներկայ գտնուելու, բայց  
եղած հրաւերին պատասխանելով յայտնեց  
թէ հարկադրուած է գործով Չմիւսնիս  
ուղեւորիլ ու այդ պատճառաւ չպիտի  
կարենայ մասնակցիլ Դիւանիս ստանձնած  
աշխատութեան, իսկ իրաւասութեան Դի-  
ւանէն Տ. Գրիգորիս Մ. Վ. իբրեւ պատ-  
գամաւոր էջմիածին ուղեւորելէ յետոյ,  
Ազգ. Ժողովոյ որոշմամբ Տօքթ. Թէրզեան  
էֆ. կանոնաւորապէս մասնակցեցաւ մեր  
ներստերուն և Դիւանիս գործերը ամբողջ-  
ովն ուսումնասիրելով, կարեւոր աջակց  
մը եղաւ մեզ ստանձնուած գործը ի գլուխ  
հանելու համար: Գալով Խմբագրութեան  
Դիւանի Ատենապետ Տր. Թիւլեան էֆ. ֆ,  
Վաւան էֆ. ֆ ամբաստանութեան նա-  
խաքննութեան մասնակցելով, համաձայն  
գտնուեցաւ Դիւանիս եզրակացութեան  
բայց վերջին նիստերուն բացակայ ըլլալով,  
չկրցաւ ստորագրել հաւաքական տեղե-  
կագիրը, իսկ Տ. Մաղաքիս Ս. բնա-  
չմասնակցեցաւ իբրեւ անդամ Խորհրդա-  
րանական Քննիչ Յանձնաժողովոյ:

Ընդ գրոյս կը վերադարձնենք Պատ.  
Ազգ. Ժողովի, Դիւանիս ԺՍ. նիստե-  
րու մանրամասն Ատենադրութիւնը, Օր-  
մանեան Ս. ֆ գրաւոր բացատրակիրը  
Վաւան էֆ. ֆ պատասխանագիրը նոր  
ապացոյցի կամ վկայութեան մասին իրեն  
ուղղուած հարցման ի պատասխան:

Դիւանս տեղեկարար կարգած է իրեն  
Տր. Թէրզեան էֆ. ֆին:  
4 Դեկ. 1911

Ատենապետաց	Մայր Դիւանի	Մ. ԱԶՍԲՆԱՆ
»	Պատժամակուրեան Դիւանի	Տր. Գ. ԱԷԼՍԷ
»	Համարակալութեան	Յ. ՊՈՅՍՆՆԱՆ
»	Իրաւասութեան	Տր. Ս. ԹԷՐԶԵԱՆ
»	Նախաձեռնութեան	Պ. ՓՍՓՍԶՆԱՆ
»	Կալուածոց	
»	Խմբագրութեան	
»	Քննիչատեղեան	
»	Յարաբերութեան	



4196



41064